ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի «ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1419-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 1419-Ն որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. 2021 թվականի հոկտեմբերի 28-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի գրությունը, որով ներկայացվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 10-ի «ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին» ԵԴ/17521/02/21 քաղաքացիական գործով որոշումը:

Վերոհիշյալ որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 1419-Ն որոշման՝ Սահմանադրության 59-րդ և 60-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

2. Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ այն չի համապատասխանում սահմանադրաիրավական կարգավորումների, մասնավորապես՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, և ըստ այդմ՝ առկա է գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը:

Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարան դիմելու կարգի մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանները վարույթը կասեցնելու դեպքում հիշյալ հոդվածով նախատեսված դիմումները կարող են ներկայացնել վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 4-րդ գլխով սահմանվում են Սահմանադրական դատարան դիմելու ընդհանուր իրավակարգավորումները, որոնք պարտադիր են Սահմանադրական դատարան դիմող բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ դատարանների համար: Օրենքի հիշյալ գլխով կանոնակարգվում են նաև գործի քննությունը մերժելու (29-րդ հոդված) հետ կապված հարցերը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է, որ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու

մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:

3. Ըստ գործի նյութերի՝ 2021 թվականի հուլիսի 14-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է մուտքագրվել քաղաքացիական գործով (ԵԴ/17521/02/21) պատասխանողի (հակընդդեմ հայցվորի) ներկայացուցչի կողմից՝ գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ միջնորդությունը: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը **2021 թվականի սեպտեմբերի 10-ին որոշում է կայացրել հիշյալ գործի վարույթը կասեցնելու մասին**, նույն օրը կայացրել է նաև Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում:

Փաստ է նաև՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 2021 թվականի սեպտեմբերի 10-ի «ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը **Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի հոկտեմբերի 26-ին** (ի դեպ, փոխանցել է սուրհանդակային ծառայության միջոցով): Այսինքն՝ **ակնհայտ է, որ դիմողը չի պահպանել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եռօրյա ժամկետը** և, հետևաբար՝ իրավասու չէ դիմելու Սահմանադրական դատարան:

4. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ այն դեպքում, երբ դատարանը Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա դիմում է Սահմանադրական դատարան և չի պահպանում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված Սահմանադրական դատարան դիմելու կարգի պահանջները, ինչը գործի քննության մերժման հիմք է, ըստ էության, կարող է հանգեցնել իր վարույթում գտնվող կոնկրետ գործի լուծման ձգձգմանը և ընդհուպ՝ տվյալ գործի ողջամիտ ժամկետում քննության սահմանադրական կարգավորման չպահպանմանը:

Ելնելով վերոշարադրյալից, ղեկավարվելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասով, 169-րդ հոդվածի 6-րդ մասով և հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 71-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 1419-Ն որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

16 նոյեմբերի 2021 թվականի
ՍԴԱՈ-226